1897 ՅՈՒԼԻՍԻ 30 (11 Օգ.) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

№ 86—ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 86

1897 ՅՈՒԼԻՍԻ 30 (11 Օգ.) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.: Առանձին համարը 7 կոպէկ:
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց. № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՎ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՎ 1 ՌՈՒԲԼԻ
Ստորագրողները պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien „Ardzagang".
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով:

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ
Բացուած է ստորագրութիւն
„БРАТСКАЯ ПОМОЩЬ
ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ"
(ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՈՒԱԾ ՀԱՅԵՐԻՆ)
Գրական գիտական ժողովածուի համար, որ շուտով լոյս կըտեսնի:
Ժողովածուի մէջ, ի միջի այլոց տպուած են ստանաւորներ—պ. պ. Կ. Թ.-ի, Ա. Մ. Ժեմչուժնիկովի, (լիակատար ֆակսիմիլէ), Ի. Ա. Բելոուսովի, Վ. Գոլովոշովսկու, Սավէլեէվի, Բալմոնտի, Ֆ. Է. Կորշի, Վ. Հէսսէնի, Ա. Լ. Բօրավիկովսկու, Ե. Կ. Ալիբեկեանցի, Ս. Ի. Չախօտինի, Կոշեվիչի, Իվան-դա-Մարիայի, Վ. Բելօուսովի, Կանանի, Կ. Ծատուրեանի, Յ. Թումանեանի և այլոց: Նամակներ—Բելինսկու, Գերցէնի, Մ. Ե. Սալթիկովի (լիակատար ֆակսիմիլէ), Լ. Ն. Տօլստոյի (լիակատար ֆակսիմիլէ). զրոյցներ—Դ. Ն. Մամին Սիբիրեակի, Կ. Ս. Բարանցեվիչի, Վ. Գ. Կորոլէնկոյի, Ն. Ն. Զլատովրատսկու, Աստախովի, Ն. Դ. Տելեշովայի, Ա. Ա. Վեսելօվսկու և այլոց. հետևեալ պրօֆեսորների յօդուածները.—Գ. Ի. Մելիկովի (Գրանովսկու դասախօսութեանց անյայտ դասընթացը) Ի. Ի. Թարխանովի, Մ. Մ Կօվալեվսկու, Կ. Ա. Թէմիրազիեվի, Ա. Ն. Կարեէվի, Վ. Դ. Սպասովիչի, Ն. Ի. Ստորոժենկօ, Վ. Ֆ. Միլլերի, Ա. Ն. Վեսելովսկու, Գ. Խալաթեանցի, կոմսուհի Պ. Ս. Ուվարովայի, Մ. Ա. Վենեվիտինովի, Մ. Վ. Նիկոլսկու, Գ. Ե. Քանանեանցի, Վ. Ա. Գոլցէվի, Բուկվայի, Դիոնէօի, Պ. Ա. Բելօգօլովիի, Բարոն Ձտակելբերգի, կոմս Լ. Ա. Կոմարովսկու, գեներալ Պօտտոյի, Պ. Ն. Օբնինսկու, Ա. Ն. Սազանովի, Ա. Ս. Խախանովի, Չօրանեանի, Վ. Ե. Երմիլովի, Վ. Վ. Վերեշչագինի, իշխան Է. Է. Ուխտոմսկու, Վ. Ա. Գոլցստրէմի, Ս. Դ. Մախալովի. Լ. Զ. Մսերեանցի, Վ. Ե. Երմիլովայի, Գ. Ա. Ջանշեանի, Ի. Ա. Վեսելովսկու, Մ. Բերբերեանի և այլոց:
Ցանկացած կըլինի Յ. Կ. Այվազովսկու չորս ինքնուրոյն նկարները, Վ. Ե. Սուրենեանցի շրջանկարները, աւելի քան 100 տեսարաններ Անդրկովկասի և Տաճկական-Հայաստանի, հեղինակների ֆակսիմիլէներ, պատկերներ, ի միջի այլոց Բելինսկու, Նրա ընտանիքի, Գրանովսկու, Սալտիկովի, կոմս Լորիս-Մելիքեանի, Բելօգօլովիի, Վ. Ա. Արցիմովիչի, Ս. Ի. Զարուդնայի, Կաթուղիկոս Մկրտիչ I-ի, հայր Ալիշանի, Ադամեանի, գեներալ Լազարեանի, Տէր Ղուկասեանի, Ճելկովնիկեանի, Յ. Այվազովսկու, Էմինի, Պատկանեանների, Քանանեանի և այլոց պատկերները:
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է. «Русскія Вѣдомости» լրագրի գրասենեակում, նոյնպէս Կարբասնիկովայի (Моховая) «Трудъ» (Мясницкая), «Новое Время» և Վօլֆի (Кузнецкій Мостъ) «Русская Мысль» (Никитская) գրավաճառանոցներում:
Հատորի գինն է (մօտ 900 մեծադիր երեսներ) 4 ռուբլ., շքեղ թղթերի վրայ 5 ռուբլի, գիրքը լոյս տեսնելուց յետոյ գինը կ'աւելանայ:
Խմբագրութեան հասցէն.—Москва, Зубовскій бул. д. 6, кв. 1.
Ժողովածուի նպատակին համակրող հրատարակութիւններից խնդրվում է արտատպել ներկայ յայտարարութիւնը:
Խմբագիր—Դր. ՋԱՆՇԵԱՆ:

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրատարակում է ի գիտութիւն ընդհանրութեան թէ կառավարութեան թոյլտուութեամբ Ընկերութեան կանոնադրութեան §§ 10 և 11 փոխուած են և Ընկերութիւնը 14 և 25 տարով փոխառութիւն տալուց անկախ, տալիս է փոխառութիւն նաև 36 ՏԱՐՈՎ ԵՒ 4 ԱՄՍՈՎ, վերցնելով 5% շահ 1% դրամագլխի շիջումն, $\frac{1}{4}$ % Վարչութեան ծախքերի համար և $\frac{1}{4}$ հիմնական դրամագլուխ կազմելու, ընդամենը տարեկան $6\frac{1}{2}$ % սկզբնական դրամագլխի գումարից: (3—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին դէպքերը Թիւրքիայում:
Անխուսափելի սով և թշուառութիւնը Հայաստանում:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Վեհ. Կաթողիկոսի ուղևորութիւնը: Գերմանական կայսրը Պետերբուրգում: Կովկասեան կառավարչապետը: Բուխարայի էմիրի ժամանելը: Թաւրիզից: Նոլինով և Ջինավիեւ: Բարձրագոյն մասնագիտ. դպրոցները մտնելու քննութիւնները: „Братская помощь пострадавш. въ Турціи армянамъ" ժողովածուն: Զինուորակոչը: Թիֆլիզի բանտերը: Շուշու թեմական դպրանոցի տեսուչ: Գողութիւնները Գանձակի գաւառում: Նոր-Բայազէթից: Գանձակից: Ղզլարից: Շուշուեցից: Կովկասեան բժիշկները: Սահմանների վրայ նախազգուշութիւններ: Երկրաբանական ժողովի անդամները Թիֆլիզում: Պօլսի Ազգ. Պատրիարքար. յայտարարութիւնը: «Լումայ» հանդէսը: Նամակ Բագուից:
ՖԷԼԻԵՏՕՆ.—Առօրեայ զրոյցներ:
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—«Ամառնային նամակներ»:
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

—

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՊՕԼՍՈՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

„Local Anzeiger" լրագիրը հաղորդում է մի քանի մանրամասնութիւններ այն անկարգութեանց մասին, որոնք տեղի են ունեցել վերջին ժամանակ Կ. Պօլսի զինուորական բժշկական դպրոցում: Անկարգութիւններն առաջ են եկել ուսանողների և զինուորական բժշկական դպրոցի վարիչ սպաների մէջ եղած վիճաբանութիւնից: Վերջինները օգնութեան հրաւիրեցին զօրք և երկու ուսանողներ վիրաւորուեցան: Նրանցից մէկին աչքը հանեցին, իսկ միւսն անզգայ փռուեցաւ գետնին: Դպրոցի կառավարիչ Ալենի-փաշան դիտաւորութիւն ունէր կոտորել բոլոր խառնվարար ուսանողներին, բայց իր ժամանակին բարձրից ստացուած հրամանն արգելք եղաւ այդ դիտաւորութեան կատարման: Զօրքերի հրամանատար Ռահիմ բէյը վիրաւորեց ուսանողներին, ուստի և նրանցից մէկն ապտակեց նրան: Այս ուսանողը նոյն գիշերն իսկ դատապարտուեցաւ եօթնեայ բանտարկութեան: Մնացածներն ուղարկուեցան ամենավատ բանտերից մէկը, առանց բացառութեան վիրաւորուածների էլ, որոնց մինչև անգամ զլացան բժշկական օգնութիւն տալու: Ինչպէս երևում է, անկարգութիւնները նշանաւոր էին, որովհետև բացի մշտական պահապաններից, նրանց առաջն առնելու համար պատերազմական նախարարի հրամանով դպրոց ուղարկուած էր մի վաշտ հետևակ զինուորների և հեծելազօր: Բանտարկուած ուսանողները 24 ժամ մնացին առանց կերակրի և ջրի: Անկարգութեանց առթիւ կազմուած արտակարգ ատեանը առաջին և երկրորդ դասարանների 47 ուսանողներին աքսորի դատապարտեց անյայտ տեղեր:

—

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԵՒՐՈՊԱՅԻՆ ԵՒ ՍՈՒԼԹԱՆԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ

Տաճկական «Մալումաթ» լրագիրը, որ, ինչպէս յայտնի է, Եըլդըզ-Քեօշկի անմիջական բերանն է, հրատարակում է հետևեալ յայտարարութիւնն, որ բաւական լաւ բնորոշում է մահմեդական շրջաններում տիրապետող տրամադրութիւնը: Եւրոպան, ասում է այդ լրագիրը, չէ կամենում հասկանալ Տաճկաստանի ներքին վիճակը և չէ կամենում իր նախապաշարեալ կարծիքը նրա մասին փոխել, բայց կըգայ օրը, երբ Եւրոպան մեր գործողութեանց եղանակը կըհասկանայ ու կըգնահատէ նրան և այդ օրը հեռի չէ»: Նոյն լրագիրն ասում է, որ Ջեվատ-փաշան Կրետէ նշանակած է ոչ միայն իբրև զօրաց հրամանատար, այլ և իբրև կղզու նահանգապետ և նրան լիազօրութիւն է տրուած հարկաւոր դէպքում, մինչև անգամ հակառակ ծովակալների հրամանին, վարուել համաձայն իր անձնական բարենկատողութեան»:

—Կ. Պօլսում ոստիկանութիւնը մի հին մզկիթում՝ Եդիկուլէում՝ գտնում է զէնքերի գաղտնի պահեստ: Տեղի են ունեցել շատ ձերբակալութիւններ: Դուռը մեծ պետութեանց դեսպաններին զգուշութիւն յայտնեց 18 եւրոպական լրագրների դէմ, որոնք անստոյգ լուրերով վայր են գցում Տաճկաստանի կշիռը: Դուռը սպառնում է լուրջ միջոցներ ձեռք առնելու, եթէ լրագրների այդ ընթացքը չշարունակուի: Բացի դրանից նա գանգատում է այն անվայել ծաղրածութեանց դէմ, որոնք երևում են եւրոպական պատկերազարդ հանդէսներում իսլամի և խալիֆի վերաբերութեամբ:

—

ՆՈՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալ շաբաթ Կ. Պօլսում անհանգստացնող լուրեր էին տարածուած հայերի կատարելիք նոր ցոյցերի մասին: Այս պատճառով բազմաթիւ հայեր ձերբակալուեցան:

ԿՐԵՏԷԻ ԴՐՈՒԹԻՒՆ

—

Հեռագիրը ամսոյս 25-ից լուր բերեց, որ խաղաղութեան դաշնագրի 13 յօդուածներն էլ քննութեան ենթարկուելուց և ընդունուելուց յետոյ արտաքին գործոց նախարարը ստորագրել է նրանց, բացի 6-րդ յօդուածից, որ վերաբերում է Թեսալիան տաճիկ զօրքերից մաքրելու կարգին.

Ուրեմն ամենաէական յօդուածը դեռ չէ ընդունուած Թիւրքիայի կողմից և կասկած չկայ որ կրկին նոր բարդութիւններ կ'առաջանան, թէև մի քանի լրագրներ ուզում են հաւատացնել որ դաշնագրի գործը վերջացած կարելի է համարել, դեսպանաժողովում և միայն մնում է Տաճկաստանի և Յունաստանի կառավարութեանց փոխադարձ համաձայնութեամբ ստորագրել նրան: Նոյն այդ լրագրներն աշխատում են հաւատացնել, թէ այդ դէպքումն էլ հաւանական է, որ առանձին դժուարութիւն առաջ չեն գայ, որովհետև որևէ տարակուսութեան դէպքում, գործի որոշումն մնում է դեսպանների ժողովին, որի վճիռը երկու կողմերի համար էլ անդառնալի պիտի լինի: Սակայն մենք չենք հաւատում այդ ենթադրութեանց՝ հիմնուելով ամեն օր կատարուող փաստերի վրայ:

Խաղաղութեան դաշնագրի ստորագրուելուց յետ, հանդէս կըգայ Կրետէի ինքնավարութեան գործը: Տարակոյս չկայ, որ Տաճիկ կառավարութիւնն այս խնդրումն էլ, ըստ իւր աւանդական խարդախ քաղաքականութեան, կ'աշխատէ գործը ձգձգել և բարդութիւններ առաջ բերել, և անտարակոյս այդ նպատակով էլ Ջաւադ փաշան ուղարկուած է Կրետէ, ուր նա կամեցել է անմիջապէս բանակցութիւններ սկսել ապստամբների գլխաւորների հետ և տեղական թէ մահմեդականներին և թէ տաճիկ զօրքին սիրտ տալ ցոյցեր անելու, մինչև իսկ եւրոպական զօրքերի դէմ: Բայց այս անգամ նրա բոլոր ջանքերը զուր են անցել, որովհետև ապստամբների գլխաւորներն ոչ միայն հրաժարուել են նրա հետ բանակցելուց, այլև մահուան սպառնալիքով արգելել են ում և իցէ նրա հետ անմիջապէս բանակցել: Իսկ պետութեանց ծովակալները յայտնել են նրան, որ եթէ տաճիկ զօրքերի կողմից որևէ վիրաւորանք հասցնեն եւրոպացի պահապան զինուորներին, վերջիններին իրաւունք տրուած է զէնք գործ դնելու: Ճանաչելով տաճկի յանդգնութիւնը դժուար չէ ենթադրել, որ Ջաւատ փաշան նոյն իսկ յանձն առնէ տաճիկ և եւրոպական զօրքերի մէջ ընդհարման պատասխանատուութիւնը, որովհետև այդ տեսակ դէպքում մեծ պետութեանց յարաբերութիւնը Տաճկաստանի հետ թէև աւելի կըլարուի գուցէ, վերջ ի վերջոյ ստիպողական միջոցների սպառնալիքը կըմնայ միայն սպառնալիք՝ Պետութեանց դեսպանների համար, ինչպէս քանիցս յայտնած են, Կրետէի խնդիրը վերջացած հարց է, քանի որ նրա ինքնավարութիւնը սկզբունքով սուլթանը ընդունած է և Կրետէի յեղափոխականներն էլ, ինչպէս հաղորդեց հեռագիրը, հրաժարուելով Յունաստանի հետ միանալու դիտաւորութիւնից, համաձայնել են բաւականանալ ինքնավարութեամբ: Այսպէս ուրեմն Կրետէի խնդրի վերաբերութեամբ պետութեանց — եթէ նրանք անկեղծ են—մնում է միայն ընտրել Կրետէի համար քրիստոնեայ նահանգապետ, և սկսել իրագործել ինքնավարութիւնը, որի գլխաւոր կէտերն էլ արդէն յայտնի են: Եթէ պետութիւններն անկեղծօրէն գործի դիմեն, Դուռը ամենևին չէ կարող առանձին խոչընդոտներ և գործի յապաղումն առաջ բերել, քանի որ արդէն դրանց առաջ նախազգուշացումներ եղած են և խնդիրը ըստ էութեան լուծուածի պէս է:

Տարակոյս չկայ, որ Կրետէի ինքնավարութեան իրագործման հետ մեծ պետութիւնները պարտաւոր են վերջ տալ հայկական և մակեդոնական խնդիրներին: Բայց նախ և առաջ, կարծում ենք, որ մեծ պետութեանց առաջին գործը պիտի լինի ստիպել տաճիկ կառավարութեան նախազգուշացուցիչ միջոցներ ձեռք առնել սպառնացող սովի դէմ, որովհետև ինչ որ անցեալ տարիներում կառավարութեան դրդմամբ մահմեդականների մոլեռանդութիւնն ու յափշտակասիրութիւնը գործեցին սպանմամբ և յափշտակութեամբ, նոյնն այս ձևով կանէ սովը:

Թիւրքիայի հպատակ քրիստոնեայ ազգերի ծանր վիճակի պատասխանատուութիւնը որչափ ընկնում է սուլթանի վրայ, կրկնապատիկ աւելի է ընկնում եւրոպական պետութեանց վրայ, որոնք իրանց շահերի համար զոհում են քրիստոնեայ ազգերին վայրենու բարբարոսութեան, ստեղծելով մի կեղծ դրութիւն, որից ելնելու ոչ մի հնար չէ լինում:

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՍՈՎ ԵՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

(Շարունակութիւն և վերջ *)

Այսպէս, ապահովութիւնը մերժուելով մեզ մի վարչութեան կողմից, որ չէ կամենում երկիր աւերող աւազակների վրայ ձեռք բարձրացնել, չնայելով որ այդ աւազակները իսկական յափշտակիչներ են՝ յայտնի իրանց հազարաւոր զզուելի սխրագործութեամբ—միւս կողմից կողոպտուած գիւղացիները մնում են առանց ոչնչի՝ իրանց ընդարձակ հողերի ամայութեան մէջ: Ո՞վ կըհամարձակուէր տալ նրանց մի բուռ ցորեն փոխ, երբ իրաւամբ վախենում են որ քիւրդը կըտանի արդիւնքը, ո՞վ կըտայ նրան մի զոյգ եզ, երբ մարդ ապահով չէ թէ զոյգը տեղ իսկ կըհասնի՞ թէ ոչ, և թէ արդեօք նրանք էլ չեն գնալ աւելացնելու երկիրը կողոպտող մի վայրենի ցեղի հօտը: Այսպէս, գիւղացիները ոչ մի տեղ չեն կարող գտնել ոչ ազնիւ օգնութեան և ոչ ընկերակցութիւն, նրանք ստիպուած՝ մնացել են թևերը ծալած, տեսնում են սովի մօտենալը, որ սպառնում է ծանրանալ նրանց որդոց ու կանանց վրայ սոսկալի ճիրաններով:

Մեզ սպառնացող վտանգը տեսնելով, պ. Վիլեամս անգլիական հիւպատոսը, մտածեց իր ստացած նպաստը բաշխել թշուառներին, որ մօտ 2,500 թիւրքական լիրա էր: Այդ փողով նա Պարսկաստանում առաւ երկրագործական անասուններ—եզներ և գոմէշներ: Միտքը լաւ էր, բայց մենք իսկապէս որ մի սև բաղդ ունինք, ինչ որ կատարել ենք ուզում, կէսը հազիւ է յաջողվում: Ձիւնը այս ձմեռ այնքան առատ էր որ սահմանագլխի ճանապարհները միայն նոր բացուեցին և առաջին խումբը եզների, մօտ 300 հատ, երէկ մայիսի 8-ին Արչէլը (Արճակ)—Վանից 6 ժամ հեռու գտնուող գիւղը հասաւ, ուր նա մի քանի օր պիտի մնայ՝ յետոյ ցրուելու համար: Այդպիսով, թանկագին ժամանակը անօգուտ անցաւ և այդ անասունները իրանցից սպասուած ծառայութիւնով միայն մի քանի օր հազիւ կարող են օգուտ տալ և, հետևապէս, նրանց վրայ դրած յոյսն էլ կիսովին կորսուած է:

Մեր վիճակը ուրեմն սարսափելի էր, գրեթէ յուսահատ, երբ յանկարծ այս մայիս 1-ին կառավարութիւնը զարթնեց իր թմրութիւնից, գուցէ սովի բոլորովին մօտ լինելը վեր թողրեց նրան: Ինչ որ էլ լինի, նա իմաց տուաւ որ միւս օրը, մայիս 2-ին, Ն. վսեմութիւն կուսակալի մօտ խորհուրդ էր կայանալու. այդ խորհուրդին հրաւիրուած էր Վանի քաղաքապետը, այն ստոր և վատթար Խալիլ փաշան, որ յունիսի սոսկալի օրերում մէկ մէկ մորթել տուաւ իւր մօտ հիւրընկալած 130 հայի իւր թաղից և դեռ մինչև այժմ նա քաղաքապետ է մնացել. հրաւիրուած էին նաև չորս ուրիշ թիւրք մեծամեծներ, հայոց առաջնորդը, ֆրանսիական, անգլիական կոնսուլները, այլև ամերիկական միսիօնէր պ. Րայնօլդսը:

Խորհրդի նպատակն էր յատուկ միջոցներ գտնել երկիրը սովից պահպանելու համար, եթէ հնարաւոր էր: Ստուգելուց յետոյ որ ամերիկական միսիօներների բերել տուած եզները, ի նկատի ունենալով անմշակ մնացած հողերի շատութիւնը, բաւականաչափ օգուտ չէին տալու—հարց դրին թէ արդեօք չպէտք էր ստիպել քիւրդ աղաներին, քրիստոնեաների տրամադրութեան տակ դնել իրանց եզները: Այդ ձեռնարկութիւնը մերժուեց և իրաւամբ. կառավարութիւնը գիտակից է իւր չափազանց թուլութեանը և լաւ հասկանում է որ, եթէ ձեռնարկէր քիւրդերին ուժով ստիպել, անշուշտ կըյաղթուէր: Ուրեմն ինչ պէտք էր անել: Վճռեցին Վան հրաւիրել քիւրդ աղաներին և բացատրել նրանց որ օսմանեան կայսրութեան շահը պահանջում է հաշտութիւն կայացնել հայերի հետ, փոխ տալ նրանց եզներ այն պայմանով, որ հունձքի կէսը տրուի իրանց—աղաներին: Եւ իսկապէս, ահա մի քանի օր է որ քիւրդ աղաները սկսում են քաղաք գալ:

Իսկ ցանելու համար ցորե՞ն:

Ցորենի, գարու ժամանակը անցել է, տարեկանը միայն հետևեալ տարին պիտի քաղուի, մնում է կորեկը, որ կարելի է ձեռք բերել Բիթլիսից:

Ուրիշ ճար չգտան: Այս բոլորը լաւ է ապացուցանելու փորձուած ջանքերի ապարդիւն լինելը:

Նախ և առաջ, ինչ որ էլ ծնելու լինէր այդ բոլոր փոխանակուած խօսքերից—շատ ուշ է արդէն. երկու ամիս առաջ էր հարկաւոր մտածել գտնելու տաւար և ոչ այժմ: Երկրորդ՝ ամեն ինչ անհաստատ է, անստոյգ և անհաստատ է քիւրդերի բարեհաճութիւնը, քանի որ նրանց ներշնչուած է մի կատարեալ ատելութիւն դէպի հայերը, նրանց ցոյց է տրուած իրանց ապրուստի աղբիւրները միայն ոչնչացնելով հայերին, նոյն իսկ անստոյգ է եկող կորեկի հասնելը կամ օգտակար լինելը: Եւ մինչ մեծամեծները ժողովներ անելով են զբաղուած, ժամանակը անցնում է, ժամանակ, երբ հարկաւոր էր միմիայն գործել:

Ուրեմն սովը անխուսափելի է և մենք այս ձմեռ, մի դառն սոսկալի փորձութիւն ենք կրելու, եթէ միայն Աստուած չխղճայ մեզ և մարդկանց համար անտեսանելի մի օգնութիւն չհասցնի:

Եւ սովի երկիւղը այն աստիճան հիմնական է, ստոյգ, որ ամերիկական միսիօներները, չնայելով որ ձեռքի տակ ունին ահագին նպաստ բաշխելու, խոստովանում են իրանց անկարողութիւնը և առաջարկում են հայերին՝ խմբովին գաղթել: Դժբախտաբար այդ միջոցը չի օգնելու, վտանգը միայն մի տեղից միւսը կըփոխադրուի. ժողովուրդն էլ փոխանակ օտար երկրում սովից մեռնելու, գե-

*) Տես «Արձագանք» № 85.

բաղասում է մնանել իր հայրենիքում . . .

Եւ խնդալէս, Ռուսիա կամ Պարսկաստան գաղթող գիւղացիները, մարդիկ, կանայք, մանուկներ, ինչ պիտի գտնեն այնտեղ ուտելու։ Բացի դրանից, մենք գիտենք որ այդ երկրների կառավարութիւնները տրամադիր չեն երբէք իրանց դռները բանալ թշուառութեան հասած մի ժողովրդի, որին հարկաւոր էր մի առ ժամանակ կերակրել առանց օգտի, քանի որ նրանք բոլորը կըլեցուէին այդ երկրների գիւղերը։

Այդ առաջարկը (գաղթելու) պէտք է մերժուի ուրեմն, մանաւանդ որ օսմանեան կառավարութիւնն էլ չի թոյլ տալ այդ ծրագիրը գործադրելու։

Վտանգը սաստկացած. Վանի կառավարութեանն է մնում միայն նրա առաջն առնել։ Մնում է միայն հիմնուանից աչքի առաջ բերել, հրաչակել վտանգի գոյութը, որպէս զի բրիտանէական գթութիւնը պատրաստ լինի, ժամանակը հասնելիս, սփոփելու այն թշուառութիւնը և ազատելու որին որ հնարաւոր է. մի թշուառութիւն, որ ակներև արդիւնքն է անցեալ տարուայ գործադրուած անգթութիւնների, թելադրուած հէնց օսմանեան կառավարութեան իրանից։

Գոնէ այժմեանից կարելի է գոքեն գնել քանի դեռ սովի գները չեն յայտնուել։

Վերջացնում եմ նամակս և ուզում եմ ակներև անել այս գրութեան հասցնող պատասխանատուները։ Թողնելով մի կողմ որ կոտորածները ծնեցրին սովը, ես պնդում եմ՝ որ բոլորի պատասխանատւութիւնը խստութեամբ ծանրանում է նոյն ինքն կայսերական կառավարութեան վրայ։ Ես այդ խօսքերը արտասանում եմ երկար և հաստատ խորհրդածութիւններից յետոյ և համոզուած՝ որ ասածս բացարձակապէս ճիշտ է։

Օսմանեան կառավարութիւնը, որ իւր կառավարչական սիստեմը հիմնել է իրան անհանգիստ անող ազգերի բնաջնջման վրայ, կարելի է համարել, հայ ժողովուրդը ոչնչացնելու համար—մի ժողովուրդ, որ առհասարակ խաղաղ է—նրա անդամներից մի քանիսի յուզմունքները առիթ բռնելով, կոտորել բոլորին, քաղաքն ամբողջ և նահանգը սովի առաջ տալ, այրել տները, ուղարկել ամեն կողմ մարթողների խմբեր, և իր ոստիկանները, իր ժանդարմները, իր պաշտօնեաները, իր զինուորներն իսկ մասնակից եղան այդ ահագին աւերածութեան։ Նա քաղաքի թրքական վայրենութեան և քիւրդերի բարբարոսութեան թող տուեց հայ աղջիկների և կանանց պատիւը, որոնցից դեռ շատերը հեծեծում են մնացած քիւրդերի ձեռքը և նոյն իսկ քաղաքում՝ թիւրքերի տան մէջ, ուր նրանք իբր զուարճութեան առարկայ, իբր ապականութեան զոհեր են ծառայում նոյն իսկ թիւրք ոստիկանների համար։

Այս բոլորը հրէշաւոր է, զայրացուցիչ և դեռ կան անձինք, որոնք կարծում են թէ այս սոսկումները, որոնք ամիսներ տեւեցին, կարող են վերջանալ և կըգան լաւագոյն օրեր! Դա նշանակում է չճանաչել իսլամի որդուց. Նրանց վրէժխնդրութիւնը դեռ չէ յագեցած և հայերի գլխին դեռ շատ պիտի թափուի այդպիսի հարուածներ! . . .

Այս դժբաղդ ազգը ոչինչ չէ ուզում, եթէ ոչ ապահովութիւն, իրական մի ապահովութիւն, կարող լինելու զբաղուել վաճառականութեամբ, արհեստներով, երկրագործութեամբ. նա յայտարարում է պաշտօնապէս, որ եթէ ապահովութիւն շնորհուի իրանց, նա ոչ հացի բաշխում, ոչ փողով օգնութիւն կուզի, այլ ինքը հէնց նորից կըգտնի տաւար, սերմացու եայլն։

Նորին վսեմութիւն կուսակալը, վերոյիշեալ ժողովների ժամանակ, մինչև իսկ յատուկ ճարպկութեամբ կամենում էր այդպիսի խօսքեր կորզել հայ առաջնորդի բերանից։ Լաւ ուրեմն, հային կտան այն, ինչ որ չը գիտէ ինչ անի, նրանից կըկամեն ոստիկանութիւն, զափթիէներ, հարկահաւաքներ, կառավարչի օգնական, բայց չեն տալ այն խնդրած ապահովութիւնը, որին այնքան պէտք կայ, առանց որի այս ժողովուրդը մեռնում է. . .

Բ. Դռնից և պալատից եկած կարգադրութիւններն այնպէս են խառնակ, որ ապահովութիւն ձեռք բերել այլևս անհնար է, նահանգը բռնող 9 փաշա զօրքն իսկ անկարող է ձեռք բերել. տաս անգամ իսկ աւելին լինէր, էլի հնարաւոր չէ, քանի որ թոյլատրուած չէ դիպչել այն աւազակներին, որոնք յանխնաբար կոտորածի արին և շրջակայք սարսափահարելուց չեն դադարում։ Համիդիէ քիւրդերը, որ կոտորածների օրերից սկսած զինուած են և որոնց իշխանութիւնը բնակեցրած է քաղաքի բնակիչների տներում և որոնք պաշտօնապէս մասնակցեցին կոտորածին, մնում են շարժման մէջ, անմատչելի ինչ որ էլ անէին նրանք առանձնապէս։

Նրանց գլխաւորներից երեքը, Երզրումի, Վանի, և Բիթլիզի կուսակալների միահամուռ ազդարարութեան վրայ ուղարկուած լինելով Երզնկա՝ 4-րդ զօրաբանակի հրամանատարի մօտ, նրանցից մէկը, Հիւսէին փաշան ետ դարձաւ՝ Վանի ժանդարմերիայի գնդապետի տիտղոսով, այլ և սուլթանից ստացած մի ոսկէ մեդալ էլ կրծքին։

Կառավարութիւնն ուրեմն, ստոր գաղտնի, կամովին և անշուշտ պատասխանատու է այս սովալի դրութեանը և սովին, հովանաւորելով անդադար այն բոլոր չարագործներին, որոնք աւերել են վիլայէթը և որոնց թւում է թէ պահպանում են՝ նոր կոտորածներ առաջացնելու համար, կոտորածներ, որ անշուշտ տեղի կ'ունենան—եթէ Եւրոպան չփշրէ այս սիստեմը—և գիւղական հայերին կը ոչնչացնեն սովով, սրով և գնդակով։

Այսպէս է ահա պալատի և Դրան բռնած ու վարելու ուղղութիւնը։

Մենք լաւ վալիներ էլ ունեցանք, այո. Նազիմ փաշան Վանի, որ 6 ամբողջ ամիս յաջողուեց ուշացնել կոտորածը, որին գրգռում էր սուլթանի թիկնապահ Սաադ-էդդին-փաշան։ Նաև Ջէմալ էդդին բէյը, որ շատ լաւ մտադրութիւններ ունէր, սակայն թոյլ էր, այլև ստիպուած էր թողնել ամեն լաւ միտք՝ Կ. Պօլսից եկած հրամանների վրայ։ Զինուորական զօրախումբը ղեկավարում է Ջէմալ փաշան, որ վճռել է կարգ ու կանոն պահպանել ամենայն խստութեամբ, բայց Կ. Պօլսից եկած կարգադրութիւնները ոչնչացնում են նրա լաւ մտադրութիւնները։

Վերադառնալով այն խնդրին, որի վրայ էի կամենում ձեր ուշքը դարձնել, պարոն վերատեսուչ, ես ուզում եմ կրկնել, որ մենք սովի ենք մօտենում. որ մի քանի ամսից յետոյ կըտեսնենք թէ ինչպէս մի ամբողջ ժողովուրդ կըմեռնի, բառիս բուն նշանակութեամբ, սովից կըգայ մեր ոտքերի մօտ քարշ գալու՝ խնդրելով մի կտոր հաց, և որ մենք միայն շատ չնչին կտորներով կարող կըլինէինք բաժանել և շատ քչերին։

Հէնց այսօրուանից ես ազդակ եմ բարձրացնում, որպէս զի Ֆրանսիան գիտենայ, որ շատ չուշած, մօտիկ ապագայում, կունենայ իւր աչքի առաջև մի անհուն դժբաղդութիւն սփոփելու համար. . .»

Թարգմ. ֆրանս. Վ. Փ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Պրիազ. Կրայ» թերթին հաղորդում են Պետերբուրգից, թէ առաջիկայ աշնան այնտեղ սպասում են Վեհափառ Կաթողիկոսին։

* * *

Ն. Մ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐԸ ԵՒ ԿԱՅՍՐՈՒՀԻՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Ամսոյս 26-ին, կէսօրին մօտ, Կրոնշտադ ժամանեցին Նոյնին Կայս. Մեծ. գերմանական Կայսրը և Կայսրուհին «Հօհենցօլերն» նաւով, որին ուղեկցում էին գերմանական 9 նաւեր։ Այդ իսկ միջոցին ռուսական կայսերական «Ալեքսանդրիա» շոգենաւը, որի մէջ էին Թագաւոր Կայսրը, Կայսրուհին, և Մեծ Իշխան ծովակալ Ալէքսէյ Ալէքսանդրովիչ, ժամանեց Կրոնշտադի նաւահանգիստը Պետերհօֆից և մօտեցաւ Հօհենցօլերն նաւին։ Կայսրը և Կայսրուհին գնացին Հօհենցօլերն նաւը փոքրիկ շոգենաւով, իսկ միմեանց դիմաւորելուց յետոյ ռուսական և գերմանական կայսրները անցան «Ալեքսանդրիա» շոգենաւը և ուղևորուեցին Պետերհօֆ, ուր կայարանում նրանց դիմաւորեցին Մեծ Իշխանները, Մեծ Իշխանուհիք, շքախումբը, գերմանական պետական կանցլեր իշխան Հօհենլօէն, դեսպան Ֆօն-Բիլօվը և գերմանական դեսպանութեան բոլոր անդամները։ Պատւոյ զօրագնդին ողջունելուց յետոյ երկու Կայսրները կառքով գնացին Պետերհօֆի պալատը, իսկ նրանց ետևից երկու Կայսրուհիք ուրիշ կառքում։ Պալատ ժամանելուց յետոյ կայացաւ ընտանեկան նախաճաշիկ։ Հանդիսաւոր ճաշը տեղի ունեցաւ յուլիսի 26-ին, երեկոյեան ժամը 8 ին, Պետերհօֆի մեծ պալատում։ Բարձրագոյն սեղանին նստած էին գերմանական Կայսրուհու ձախ կողմը—Թագաւոր Կայսրը և Թագուհու Կայսրուհու Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ձախ կողմը—գերմանական կայսրը։ Նոյն սեղանին մասնակցում էին կայսերական ընտանիքի անդամները, պալատական տիկնայք և ռուսական և գերմանական բարձրագոյն պաշտօնեաները։ Ճաշի ժամանակ Թագաւոր Կայսրը խմեց Վիլհելմ կայսեր հետևեալ ճառով.

«Ձեր Մեծութեան և Նորին Մեծութեան կայսրուհու և թագուհու ներկայութիւնը Ինձ շատ մեծ հաճոյք է պատճառում և Ինձ շատ հաճելի է արտայայտել ձեզ Իմ անկեղծ շնորհակալիքս։ Մեզ միացնող աւանդական կապերի և Մեր դրացի պետութեանց մէջ հաստատուած բարեկամական յարաբերութիւնների այս նոր ապացոյցը միևնոյն ժամանակ մի թանկագին գրաւական է ընդհանուր խաղաղութեան պահպանութեան, որ Մեր մշտական հոգսերի և ամենաջերմ ցանկութեան առարկան է։ Ես խմում եմ Նորին Մեծութեան կայսեր և Թագաւոր Վիլհելմի, Նորին Մեծութեան Թագուհու և Կայսրուհու և կայսերական բոլոր ընտանեաց կենացը»։

Վիլհելմ Կայսրը պատասխանեց.

«Նորին Մեծութիւն Կայսրուհին և ես շնորհակալ ենք Ձերդ Մեծութիւնից բոլոր հոգով մեզ ցոյց տուած սրտագին և շքեղ ընդունելութեան համար, նոյնպէս այն ողորմած խօսքերի համար, որոնցով Ձերդ Մեծութիւնը մեզ այսպէս սիրալիր ողջունեցիք։ Միաժամանակ ես կը ցանկանայի Ձերդ Մեծութեան մատուցանել իմ խորին և ուրախալի յարգանքս այն նոր և Ինձ հիացնող առանձնաշնորհման համար, որով Ձերդ Մեծութիւնը բարեհաճեցիք Ինձ մտցնել Ձեր Մեծութեան փառաւոր նաւատորմիղի հրամանատարների շարքը։ Այդ առանձին պատիւը ես գնահատում եմ իւր լիակատար նշանակութեամբ և միևնոյն ժամանակ դա մի առանձին պատիւ է իմ նաւատորմիղին։ Ինձ ռուսական ծովակալ նշանակելու մէջ՝ ես տեսնում եմ ոչ միայն յարգանք դէպի իմ անձս, այլև նոր ապացոյց մեր թէ անձնական և թէ պետական աւանդական, հաստատ, անխախտելի աւանդական յարաբերութեանց։ Ձերդ Մեծութեան անդառնալի վճիռը առաջուան պէս խաղաղութիւն պահպանել Ձեր ազգի երջանկութեան համար, իմ մէջ ես ամենաուրախալի արձագանք է գտնում։ Այդպիսով գնալով միևնոյն ճանապարհով, Մենք միասին կըձգտենք, որպէս զի խաղաղութեան հովանեաց տակ մեր ազգերն առաջնորդենք դէպի քաղաքակրթական զարգացումն։ Կատարեալ վստահութեամբ ես կարող եմ Ձերդ Մեծութեան նորից հանդիսաւոր խոստումն տալ—գիտեմ որ դրան համակրում է իմ ամբողջ ազգը—որ ազգերի խաղաղութիւն պահպանելու մեծ գործի մէջ ես բոլոր ոյժերով պիտի աջակցեմ Ձերդ Մեծութեան և ամենազօրեղ պաշտպանութիւն ցոյց տամ իւրաքանչիւրի դէմ, ով որ փորձէ արգելք լինել խաղաղութեան պահպանելուն կամ խանգարել խաղաղութիւնը։ Խմում եմ Նոյնին Մեծութեանց Թագաւոր Կայսեր և Թագուհի - Կայսրուհու կենացը»։

Վերջին խօսքերը գերմանական կայսրն արտասանեց ռուսերէն լեզուով։

* * *

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցինը սպասւում է Թիֆլիզ կիրակէ, օգոստոսի 3 ին։

* * *

Երկուշաբթի, ամսոյս 21-ին, կէսօրից յետոյ ժամը 4-ին քաղաքս ժամանեց նորին բարձրութիւն Բուխարայի էմիր Միր Սէիդ-Միր-Աբդուլ-Ահադ խանը իւր շքախմբով և ընթերակայ գնդապետ Կուզնեցովի հետ։ Դիդուբի դաշտի վրայ, քաղաքից դուրս, Նորին բարձրութեան դիմաւորեցին դաշտային ժանդարմները և պ. կառավարչապետի կօզակ կօնվօյները, որոնց էմիրը ողջունեց ռուսերէն լեզուով։ Վերայի այգիներից այն կողմ, քաղաքի սահմանում, Նորին բարձրութեանը հանդիպեցին Թիֆլիզի կօմենդանտ գեներալ Բէյտներ, ոստիկանապետի պաշտօնակատար պ. Լօլաձէ և ուրիշները, իսկ խաչի մօտ դիմաւորեց քաղաքագլխի պաշտօնակատար պ. Իվանենկօ։ Էմիրն իջաւ «Օրիանտ» հիւրանոցում, ուր նրան այցելեցին կառավարչապետի օգնական գեներալ Ֆրիդէ, Թիֆլի-

ՖԵԼԻԵՏՕՆ

ԱՌՕՐԵԱՅ ԶՐՈՅՑՆԵՐ

(Շարունակութիւն և վերջ *)

«Դրը... բռ. ռ... տասն րոպէից յետ, ահագին դղրդիւնով, կանգ առաւ Մարուքեանի կառքը պ. Փուլչատեանի տան առաջ։

—«Պետր Ալէքսէյիչ, ինձ պիտի փրկէք, ասա թէ ոչ՝ կըխայտառակուեմ. մեծ յոյսով եմ դիմել ձեզ, աղաչում եմ չմերժել խնդիրս... Այս խօսքերով դիմեց իրաւաբանը պ. Փուլչատեանին և նրա ձեռքը մտերմաբար սեղմելով՝ նըստեց առաջարկուած աթոռի վրայ։

—«Ինչո՞վ կարող եմ պիտանի լինել ձեզ, հարցրեց Փուլչատեանը սիրալիր կերպով։

—«Ահա թէ ինչով... Եւ պարոն փաստաբանը արտասանեց մի փոքրիկ ճառ, որով լիովի ծանօթացրեց Փուլչատեանին իւր արդի դրութեան և ապագայում գալիք հաւանական անյաջողութեանց հետ, և ի վերջոյ, խնդրեց նրան՝ թոյլ տալ իրան օգտուել իւր կառքի պարապ տեղից։

—«Օ՜, ամենայն ուրախութեամբ. շնորհ արէք միայն ընկերակցել ինձ. դրանով դուք շատ մեծ հաճոյք կըպատճառէք ինձ... Պատասխանեց Պետր Ալէքսէյիչը և սիգարի տուփը մեկնեց դէպի փաստաբանը։

«Գործը վերջացած էր։ Մնում էր միայն որոշել ժամը՝ թէ երբ պիտի գնան կայարան։

—«Վաղը, ժամը 2-ին ես այնտեղ կը մտնեմ իմ պատուէրը կրկնելու, որպէս զի չմոռանան ձիերը պահել մեզ համար. այդպիսի զանցառութիւններ անում են նրանք, խօսել սկսաւ պ. Փուլչատեանը. իսկ 5 ին նորից կըգամ՝ ճանապարհուելու համար։ Մինչ այդ ժամին էլ հաճեցէք դուք գտնուել կայարանում, որպէս զի չուշանանք։

—«Ես կըգամ քառորդ ժամ առաջ, պատասխանեց Մարուքեանը և սրտագին շնորհակալութիւններ անելով Պետր Ալէքսէյիչին, դուրս եկաւ նրա մօտից։

«Ահա թէ ինչ դէպքի համար են ասել՝ «Нѣтъ худа безъ добра» մտածեց ինքն իրան պ. փաստաբանը և շնորհակալ լինելով իւր բաղդից՝ քայլերն ուղղեց դէպի իւր գեղեցկուհու՝ Մարիա Իւանովնայի բնակարանը։

«Նա այդտեղ պատմեց սիրուհուն թէ՝ ինչ վտանգ էր սպառնում իրեն ժամ առաջ, և թէ ինչ եղանակով ինքն այդ վտանգի առաջն առաւ։ Միևնոյն ժամանակ նա պարծեցաւ որ պ. Փուլչատեանը, այդ նշանաւոր հարուստը, մեծ պատիւ համարեց իրեն՝ ուղեկից ունենալ պ. փաստաբանին.—«Նա ծանօթ է իմ այժմ հետ և գիտէ թէ՝ ինչ բանում կարող եմ փրկութեան հրեշտակ լինել իւր համար»... աւելացրեց Մարուքեանը։

—«Բայց մի՞թէ դու այդքան մտերիմ ես այդ մեծատան հետ, հետաքրքրութեամբ հարցրեց Մարիա Իւանովնան։

—«Ինչպէ՞ս չէ. մենք մինչև անգամ եզակի ենք խօսում իրար հետ, պատասխանեց փաստաբանը պարծենալով. և, ընդ նմին, պատմեց սիրուհուն մի քանի սուտ ու ղորթ պատմութիւններ, որոնք վերաբերում էին իւր և Փուլչատեանի մտերմական յարաբերութեանը։ Առիթ առնելով այդ նիւթը՝ նա պատմեց նաև այն թէ՝ ինչպէս այդ կրեսոսը խնդրում, աղաչում էր ժողովարանում ծանօթացնել իրան Մարիա Իւանովնայի հետ, և թէ ինչպէս ինքը, փաստաբանը բացէ ի բաց մերժել էր նրան այդ շնորհը։

—«Ի՞նչպէս. նա խնդրել է քեզ ծանօթացնել ինձ իւր հետ և դու մերժել ես նրան... մի՞թէ կարելի էր այդպէս խիստ վարուել, հարցրեց գեղեցկուհին։

—«Ուրիշ կերպ չէի կարող վարուել. Նրա հարստութիւնը իրաւունքների սահման չի ճանաչում։

—«Ներիր, բարեկամ. այդտեղ արդէն ինձ էր մնում թոյլ տալ նրան անցնել իւր իրաւունքի սահմանը կամ ոչ. քո հովանաւորութիւնն այդ դէպքում կարծեմ աւելորդ էր։

—«Այս է եղածն, ինչ որ պատմեցի. եթէ յանցաւոր եմ, ներիր։

—Յանցաւո՞ր... ոչ։ Բայց դու ասա ինձ. նա, ուրեմն խնդրում էր որ դու ծանօթացնէիր ինձ նրա հետ։

—«Ոչ թէ խնդրում, այլ աղաչում էր։

Օ՜, ուրեմն քո վարմունքը մինչև անգամ անքաղաքավար է եղել. դու, գոնէ, այդ դէպքում իմ կամքը պիտի հարցնէիր։

—«Բայց ինչո՞ւ հարցնեմ. մի՞թէ ես չգիտեմ որ կանայք սիրով են նոր ծանօթներ որոնում։

—«Սակայն դու պիտի իմանաս որ ինձ համար նշանակութիւն չունի... (Նա կամենում էր ասել՝ «քո դրած արգելքը, երբ ցանկանամ կըծանօթանամ նրա հետ», բայց զգուշանալով լռեց)։

—«Ի՞նչ էիր ուզում ասել, հարցրեց փաստաբանը հետաքրքրութեամբ։

—«Ոչինչ. ուզում էի ասել թէ՝ ինձ համար նշանակութիւն չունի հարուստների բարեկամութիւնը. ես ազնիւ սիրտ, քնքոյշ զգացմունք և կիրթ ճաշակ եմ որոնում. և այդ ամենը գտել եմ արդէն քո մէջ։

«Պարոն փաստաբանը քիչ մնաց որ հիացմունքից հալուէր։ Նա բռնեց գեղեցկուհու գողտրիկ ու սպիտակ ձեռքը և ջերմագին համբոյրներով ծածկեց նրան։

—«Վաղը վերջին անգամ ես կըգամ քեզ հետ ճաշելու և այստեղից էլ կըճանապարհուեմ, ասաց նա Մարիա Իւանովնային խիստ զգացուած տօնով։

—«Օ՜, եթէ իմանայիր թէ որքա՛ն դժբաղդ եմ... բացագանչեց յանկարծ գեղեցկուհին։

—«Ինչո՞ւ, սիրելիս, վախեցած հարցրեց փաստաբանը։

«—Վաղը ես չեմ կարող քեզ ինձ սեղանակից անելու քաղցրութիւնը վայելել...

—«Ինչո՞ւ։

—«Մինչև անգամ չեմ կարող քեզ ընդունել...

—«Բայց պատճառը... զարմացած հարցրեց փաստաբանը։

—«Պատճառը... մի՛, մի՛ հարցներ այդ։

—«Անկարելի է. հետաքրքրութիւնից կըմեռնեմ։

—«Օ՜հ, ինչպէս խիստ ես...

—«Ասա, աղաչում եմ։

—«Վաղը իմ սովորական հիւանդութեան օրն է... իսկ այդ ժամանակ ես ոչ միայն պառկած, այլ և սաստիկ գըլխացաւած եմ լինում... չափազանց գըլխացաւած. ոչ ոքի տեսնել կամ հետը խօսել չեմ կարող... ինչ արած, սիրելիս, ջղային կանանց հետ այդ բանը պատահում է միշտ...

—«Ուրեմն ես վաղը քեզ չը՞ պիտի տեսնեմ։

—«Ոչ. բայց մի բարկանար, աղաչում եմ։

—«Այդ անկարելի է։

—«Ընդունիր թէ այսօր ես ճանապարհուել. Առաւօտ 3—4 օրից դարձեալ կըտեսնուինք։

«Շատ աշխատեց պ. փաստաբանը այս տարօրինակ արգելքը բառնալու, բայց հնար չեղաւ. գեղեցկուհին մնաց անդրդուելի։ Նա, մինչև անգամ, դժգոհութեան նշաններ ցոյց տուաւ՝ տեսնելով որ սիրահարը շատ է ձանձրացնում իրան։

«Պ. Մարուքեանը ստիպուած էր խոնարհել անողոք ճակատագրի առաջ և իւր ջերմագին «մնաք բարեներ»-ը ու գըրկախառնութեան հանդէսը կատարել այդ երեկոյեան։

«Հետևեալ օրը, իւր միայնութեան ձանձրոյթը փարատելու նպատակով նա խոհարարին պատուիրեց պատրաստել հարուստ ճաշ և հրաւիրելով իւր մօտ մի քանի մտերիմներ, քէֆ արաւ նրանց հետ փառաւորապէս և Մարիա Իւանովնայի կենացը խմեց շամպանիայով։ Ժամ 4 ի մօտ նա գրեց գեղեցկուհուն, նաև, մի նամակ, որի մէջ բանաստեղծական լեզուով, բայց փաստաբանական տրամաբանութեամբ նկարագրում էր իւր տանջանքը՝ անգութ սիրուհուց այդ կերպ բաժանուելուն համար։

«Ժամ $4^1/_2$-ին Մարուքեանի իրեղէնները կապուած, վերջացած էին։ Նա վառեց իւր սիգարը և մտերիմ սեղանակիցների հետ միասին կառք նստելով՝ սլացաւ դէպի կայարանը

«Փուլչատեանը դեռ չէր եկել. Նոյն իսկ նրա կառքը չէր երեւում բակում — «Մենք շտապեցինք, Պետր Սերգէէիչը ինձ խնդրել էր գալ ճիշտ ժամ 5 ին. դարձաւ փաստաբանը ընկերներին, պէտք չէր մեղանչել նրա ժամադրութեան դէմ։

—«Այո՛, նա ճշտապահ մարդ է. . . բայց հոգ չէ. մենք կըսպասենք մի քառորդ ժամ, պատասխանեց ընկերներից մէկը։

«Սակայն նրանք սպասեցին կէս ժամ, մի ժամ. արդէն վեցի քառորդն էր. և պ. Փուլչատեանը դեռ չկար։ Փաստաբանը սկսաւ անհանգստանալ։

—«Ինչո՞ւ պ. Փուլչատեանի կառքը չէք լծում, դարձաւ նա, վերջապէս, կայարանի սպասաւորներից մինին։

—«Փուլչատեանի կառքը... բայց ձեր ինչին է հարկաւոր նրա կառքը։

—«Երևի հարկաւոր է որ հարցնում եմ, болванъ. բարկացաւ փաստաբանը։

—«Մենք վաղուց ենք լծել նրա կառքը, պատասխանեց սպասաւորը գըլուխը քորելով։

—«Հապա ո՞ւր է.

—«Նստեց մէջը և գնաց.

—«Ի՞նչպէս թէ գնաց. զարմացած բացագանչեց փաստաբանը.

—«Գնաց, էլի.

—«Ո՞վ գնաց, տօ՛.

—«Պ. Փուլչատեանը։

—«Ե՞րբ, ո՞ր ժամին.

—«Ժամ 2-ին։

—«Անկարելի է. երևի գնացողը ուրիշ է եղել։

—«Պ. Փուլչատեանին քնած տեղը կըճանաչեմ. նա ինքն էր գնացողը և ինձ էլ մի ռուբլի նուիրեց, որովհետև կառքը լծեցի տասն րոպէի մէջ։

«Պ. փաստաբանը մնաց ապշած և նայում էր ընկերների վրայ անմիտ հայեացքով։

—«Այստեղ, անշուշտ, մի թիւրիմացութիւն կայ՝ Փուլչատեանը չէր կարող ձեզ խաբել. գնա ստուգիր, առաջարկեց ընկերներից մինը։

«Մարուքեանը, որ այդ րոպէին ինչ անելիքը չէր իմանում, համաձայնուեցաւ և կառք նստելով՝ սլացաւ դէպի Փուլչատեանի տունը։ Բայց աւա՜ղ, այդտեղ էլ նա իմացաւ նոյնը, ինչ որ լսել էր կայարանի ծառայից. Պետր Ալէքսէյիչը, արդարև, դուրս էր եկել Թիֆլիզից ճիշտ ժամը 2-ին։

—«Ինչ հանելուկ է այս. ինչու այդ մարդը այդպէս անխղճաբար խաբեց ինձ. ինչ շահ ունէր նա այդ բանում. չէ որ ազնիւ խօսք տուաւ, ժամանակ նշանակեց... Մի գուցէ նա կամեցաւ վրէժխնդիր լինել ինձ ու. . . բայց այդ անկարելի է. մի հասարակ ծանօթութեան պատճառով վրէժխնդիր լինել այս օրինակ... անկարելի է. չեմ հաւատում...», այսպիսի մտքերով տանջւում էր իրան Մարուքեանը և, միևնոյն ժամանակ, կառքը քշել տալիս։

«Դառնալով կայարան՝ նա յայտնեց

*) Տես «Արձագանք» № 85.

գի նահանգապետ պ. Բեկով և ուրիշները։

* * *

ԹԱՒՐԻԶԻՑ հեռագրում են Լօնդօնի „Daily News"-ին որ Թուրք-պարսկական սահմանագլխում անկարգութիւններ են ծագել։ Որովհետև քրդերը ներս խուժեցին սահմանը, ուստի պարսից կառավարութիւնը նրանց դէմ ուղարկեց թնդանօթներ և զօրք։ Թուրքաց զօրքերին նոյնպէս հրամայուած է սահմանը գնալ։ Լուր կայ որ կռիւը պատահել է քրդերի և հայ ապստամբների խմբերի մէջ։

* * *

«Մ. Պետ. Վեդ.» հաղորդում է, որ Կ. Պօլսում գեսպանների կազմակերպութեան մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները զանազան բացատրութեանց նիւթ են տալիս։ Տաճկասէր Նելիդովին տաճկահայ Զինովևի փոխանակելը տաճիկ պաշտօնական շրջաններին բաւական անհանգստութիւն է պատճառում։

* * *

«Արձագանքի» ներկայ համարի առաջին երեսում ընթերցողները կըգտնեն «Братская помощь пострадавшимъ армянамъ» ժողովածուի մասին յայտարարութիւնը։ Ժողովածուն պիտի լոյս տեսնի Մոսկվայում մեր յայտնի հրապարակախօս պ. Գր. Ջանշեանի խմբագրութեամբ։ Ինչպէս կըտեսնեն ընթերցողները, ժողովածուն չտեսնուած գրական և գեղարուեստական հարստութիւն է բովանդակում. նրան մասնակցում են ռուս գրականութեան և մամուլի մէջ ամենայայտնի, տաղանդաւոր ոյժերը, նրա մէջ կըլինին նոյն իսկ ռուս հռչակաւոր հանգուցեալ գրողների անտիպ երկերը, մասնակից են և հայ հրապարակախօսներ և հեղինակներ, վերջապէս մասնակից է և հանճարաւոր նկարիչ Յ. Այվազովսկու վրձինը։ Համոզուած ենք որ Կովկասեան հայերը կըշտապեն անմիջապէս բաժանորդ գրուել այդ հրատարակութեան, որ չնայելով իւր ընդարձակ ծաւալին, իւր նիւթերի չտեսնուած հարստութեան, իւր ամենահամակրելի նպատակին—շատ էժան է, այն է 4–5 ռուբլի։

* * *

Վերջերս մայրաքաղաքի թերթերում իբրև հաստատ լուր հաղորդուած էր իբրև թէ բարձրագոյն մասնագիտական դպրոցներ մտնել ցանկացող երիտասարդներից պահանջուած քննութիւնը թեթևացվում է, այդ քննութիւնները վերածելով միատեսակ ընդհանուր սիստեմի և թոյլ տալով որ ամեն մի երիտասարդ քննութիւնը յաջող բռնելուց յետոյ ինքը որոշէ իւր մտնելիք բարձրագոյն դպրոցը։ Սակայն այժմ «Նով. Վր.» հաղորդում է որ այդ լուրը ճիշտ չէ, որովհետև այդ խնդրով զբաղուող յանձնաժողովն եկել է այն եզրակացութեան, որ եթէ միջնակարգ դպրոցներն աւարտող երիտասարդներին իրանց կամքին թողնեն բարձրագոյն դպրոց ընտրել, նրանցից շատերը կընախապատուեն ճանապարհների հաղորդակցութեանց ինստիտուտ մտնել, իսկ լեռնային տեխնօլօգիական և այլ ինստիտուտները մտնող շատ քիչ կըլինի։ Յանձնաժողովի մշակած նոր գլխութիւնն այն է միայն, որ բոլոր մասնագիտական դպրոցներ մտնելու համար սահմանվում է միևնոյն քննութիւնը առանց աւելացնելու այն մասնագիտական լրացուցիչ առարկաները, որոնք չեն աւանդվում ռէալական դպրոցներում։

* * *

Ներկայ տարուան զինուորակոչին Թիֆլիսի նահանգից զինուորութեան կոչուողների թիւը անցեալ տարուանից աւելի է։ Այդպէս անցեալ տարի զինուորութեան էին կոչուած 899 հոգի բնիկներից և 113 ոչ—բնիկներից, իսկ այս տարի զինուորութեան կոչուող բնիկների թիւն է 1128, իսկ ոչ—տեղայիններինը—124։

* * *

Հետևեալ վիճակագրական տեղեկութիւններն են հաղորդվում Թիֆլիզի բանտերի վերաբերմամբ.—առ 1 ն յունուարի 1896 թ. ամեն տեսակ բանտարկեալների թիւն էր Թիֆլիզի բանտերում 885, տարուան ընթացքում բանտը մտան 4220 հոգի, որոնցից քննութեան և դատի ենթարկուածներ—1302, աքսորի դատապարտուածներ—2057, որոշ ժամանակով բանտարկուածներ—789։ 1896 թուականին այդ բանտերից դուրս են եկել 4101 հոգի։

Առ 1-ն յունվարի 1897 թ. մնում էին բանտարկեալներ 1004 հոգի։ Բանտարկեալները՝ համեմատ իւրեանց գործած յանցանքների՝ հետևեալ կերպով են բաժանվում. հաւատի դէմ յանցաւորներ—13 հոգի, կառավարութեան կարգերի դէմ յանցաւորներ—277, յանցաւոր պաշտօնեաներ—14, պետական գանձարանի և եկամուտների վերաբերմամբ յանցաւորներ—39, հասարակական հանգստութեան և կարգի դէմ յանց.—207, անձնական գործողութիւնների և կալուածների համար—15, մարդասպաններ—194, սպանութեան փորձ կատարողներ—6, վիրաւորողներ—74, ծեծելու համար—2, բռնաբարողներ—12, խօսքով և գործքով վիրաւորողներ—33, ստամանութեան համար—3, մանկասպանութեան համար—2, հրդեհ ձգողներ—8, աւազակութեան և կողոպուտների համար—142, հասարակ և փականքներ կոտրելով գողութեանց համար—79, խարդախութեան համար—36, կեղծիքի համար—67, մասնաւոր անձանց սեփականութեան դէմ ուրիշ յանցաւորներ—69 և ամուսնութեան դէմ յանցաւորներ—19։

* * *

Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ Շուշուայ թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը ընտրելով նոյն դպրանոցի տեսչութեան պաշտօնին Ներսիսեան դպրանոցի ուսուցիչ պ. Իսահակ Ցարութիւնեանցին՝ մի հեռագրով խնդրել է նրա համաձայնութիւնը, որպէս զի առաջարկէ Վեհափառ Հայրապետին ի հաստատութիւն։

Պ. Ցարութիւնեանը յանձն է առնում կատարել Հոգաբարձութեան կամքը, եթէ վերջինս կըտայ իրան կատարեալ ազատութիւն դպրանոցի ուսումնական մասի կառավարութեան վերաբերմամբ։

* * *

ԳԱՆՁԱԿԻՑ գրում են.—Գանձակի գաւառում գողութիւնները անընդհատ շարունակվում են, համարեա թէ շաբաթ չի անցնում որ այս կամ այն գիւղում խոշոր գողութիւններ չպատահեն։ Ներերս Բաանցի շրջակայքից անհետացան մի խումբ ձիաներ, որոնց տէրը (բոլոր ձիերը պատկանում էին մի մարդու) մինչև օրս զուր փնտռում է նրանց. այդպիսի դէպքերը անթիւ են ու անհամար։ Ազգաբնակութեանը մնում է իւր յոյսը դնել գաւառական վարչութեան վրայ, քանի որ գիւղական տանուտէրները անզօր են կռուելու այդ չարիքի դէմ։

* * *

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԹԻՑ մեզ գրում են. Բասար-Քեչար գիւղի բնակիչները ահա մի տարուց աւելի է ինչ զուրկ են ժամասացութիւնից, քանի որ նրանց եկեղեցին խախուտ է և այդ պատճառով գաւառական վարչութեան կարգադրութեամբ փակված, որպէսզի յանկարծակի չփլուի ու աղէտներ առաջ չբերի։ Նոր եկեղեցի շինելու համար, կամ գոնէ այդ հինը վերանորոգելու համար մինչև այժմ ոչինչ չի ձեռնարկվում և այդպիսով ժողովուրդը մնում է զուրկ հոգևոր մխիթարութիւնից. չնայած որ գիւղը ունի երեք քահանայ։ Գիւղացիք շատ ունևոր են, կան նրանց մէջ այնպիսի անհատներ, որոնցից իւրաքանչիւրը առանձին կարող է եկեղեցին կառուցանել, բայց շնորհիւ մի քանի անարժան ղեկավարների այդ գործը ձգձգվում է մինչև այժմ։ Նրանց շնորհիւ գիւղի ամբողջ հասարակութիւնը, գիւղի երեք թաղերի թուով բաժանուել է երեք կուսակցութեան, որոնցից իւրաքանչիւրը ցանկանում է եկեղեցին իւր թաղում կառուցած տեսնել և հէնց այդ է երկպառակութեան գլխաւոր պատճառը։ Քահանաների յորդորը գիւղի ղեկավարները չեն լսում և պատասխանում են նրանց կոպտութեամբ և սպառնալիքներով։ Նորերս Բասար-Քեչար գիւղի բնակիչներից մի քանիսը պատահմամբ պտնուելով Բանանցում, յայտնեցին ինձ այդ բոլորը և խնդրեցին յայտնել լրագրութեան, որպէսզի տեղական հոգևոր վարչութիւնը ուշադրութիւն դարձնի այդ հարցի վրայ ու գրգի տեղացիներին միանալ, թողնել երկպառակութիւնները ու կառուցանել եկեղեցին։

* * *

ՂԶԼԱՐԻՑ գրում են «Նով. Օբոզր.»-ին որ այնտեղի այգետէրերն այս տարի սպասում են առատ հունձի. միջին թւով յոյս կայ դեսիատինից ստանալ 300 400 վեդրօ գինի, մի քանի տարի է արդէն որ Ղզլարցիք այդպիսի հունձ չեն ունեցել, թէև վաղ ժամանակներում պատահում էր և 1000 վեդրօ ստանալ դեսեատինից։ Հունձքի աւելանալու պատճառն այն է որ Ղզլարի այգետէրերն այժմ մեծ եռանդով են կռվում խաղողի զանազան հիւանդութեանց դէմ։

* * *

ԳԱՆՁԱԿԻՑ գրում են նոյն լրագրին.—Յուլիսի 24-ին Գանձակի նոր նահանգապետն իւր ուղևորութիւնից վերադարձաւ և գնաց Հաջիքենդ ամարանոցը։ Գանձակի առաջին քաղաքամասի պրիստավը և նրա երկու օգնականներն արձակուած են պաշտօնից։

Յուլիսի 22 ին Գանձակի նահանգում անյայտ չարագործներն սպանել են 2 Թուրքեր։

Լուրեր են պտտում թէ Ղազախի գաւառում տեղի են ունեցել հետևեալ վրդովեցուցիչ դէպքը. Չորս գանձակեցիներ իրանց կանանց հետ միասին գնացել էին Ղազախի գաւառի հանքային ջրերը։ Այն ժամանակ երբ տղամարդիկ լողանում էին հանքային ջրում, իսկ կանայք անտառի հովանիքում թէյ էին խմում, նրանց վրայ արձակուեցին 8 զինուած մարդիկ, տարին անտառի խորքերը և անպատուեցին։

* * *

ՇՈՒԼԱՎԵՐԻՑ մեզ գրում են, որ տեղական այգիներում և աւանի շրջակայքում անհնարին է շրջել օձերի բազմութիւնից, շոգերից այնքան առատացել են օձերը, որ վխտում են նոյն իսկ աւանի փողոցներում և տներում և արդէն մի քանի հոգու խայթել են։

* * *

Ի նկատի ունենալով մեր երկրին սպառնացող ժանտախտի վտանգը, Կովկասեան բժիշկներին իրաւունք չէ տրվում արձակուրդ ստանալ և ներկայ լինել Մոսկուայում կայանալիք միջազգային բժշկական ժողովին։

* * *

Վերջին օրերս մեծ քանակութեամբ դեղօրայք եւ բժշկական պիտոյքներ են ուղարկվում Աղստաֆա կայարանով Պարսկական և Տաճկական սահմանագլուխների վրայի առողջապահական կայարանները, իբրև նախապատրաստութիւն ժանտախտի դէմ մրցման։

* * *

Թիֆլիզի ժողովարանի աւագների խորհուրդը վճռել է իւր ձմեռային բնակարանում հիւրասիրել և բնակեցնել միջազգային երկրաբանական ժողովի այն անդամներին, որոնք կայցելեն մեր քաղաքը։

* * *

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

—

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ գործադիր մնայուն յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն, որք Ազգային դպրութեան եւ պատմութեան վերաբերեալ ո՛եւէ աշխատութեամբ կըփափագին մասնակցել Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն ուղարկել մինչեւ յառաջիկայ 1898 տարւոյ յունվարի վերջ, առ ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայոց ի Կոստանդնուպօլիս։

Տպագիր երկասիրութիւնք հարկ է, որ երեք օրինակ լինին, իսկ ձեռագիրք մէկ օրինակ, որք, ինչպէս յայտնի է, ետ չեն դարձուիր։

Պատրիարքարան Հայոց
Կ. Պօլսոյ

10 յուլիսի, 1897 թ.
Կ. Պօլիս։

* * *

Մեզ հաղորդում են, որ «Լումայ» հանդէսի 1897 թուի Բ. գիրքը լոյս կը տեսնի այս օրերս՝ հետևեալ բովանդակութեամբ.

«Պետրոս Չանչեանց» (կենս.) Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանի, «Անդրէաս երէց» Մուրացանի, «Խաչատուր Աբովեան» Ն. Տէր-Կարապետեանի, «Հայը սուրբը» Մ. Աւետիքեանի, «Բանաստեղծի ժամացոյցը» Ա. Թումանեանի, «Մանուկ» տ. Ագնիւի, «Աւօ» Ա. Մկրտչեանի, «Աղքատի հալը» Յ. Ս. Ճուղուրեանի, «Մշոյ աշխարհ» Մամօ-գին» քաղերէնից՝ Սաղաթէլի, «Վարակիչ հիւանդութիւններ»։

Պատմական.—Նիւթեր Աղուանից պատմութեան, Գ. եպիս. Սրուանձտեանի նամակը Հ. Ալիշանին, Օտեանի նամակը Գ. եպիս. Սրուանձտեանին, Ք. Պատկանեանի նամակը Գ. եպիսկոպոս Սրուանձտեանին, Մ. Նալբանդեանի մի նամակ, Ս. Նազարեանի նամակներ։

Այլևայլք.—Վեհ. Հայրապետի Կաղանդի ընծան։ Վանի Բևեռագիրները։ «Հարիւրամեակ Նոր-Նախիջևան քաղաքի»։ Մաքի լուսանկարը։ Տիգրանակերտի կանանց զարդերը։ Ստացուած գրքեր։ Գ. եպիսկ. Սրուանձտեանի երկերի հրատարակութիւնը։

Յաւելուած.—Լենհարդ և Գերտրուդ (վերջ), թարգմ. Իս. Ցարութիւնեանի։—Յայտարարութիւններ։

* * *

ԲԱԳՈՒ, 25-ն յուլիսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Գործարանատէրերի «Հին միութիւնը» կործանուեց. այս է մեր առևտրական աշխարհի աչքի ընկնող երևոյթը այժմ։ Դեռ փետրվար, մարտ ամիսներից սկսուած նախապատրաստական ժողովները—ինչպէս ես այդ յիշել եմ իմ անցեալ թղթակցութիւններից մէկի մէջ—ոչինչ դրական արդիւնք չտուին. Նրանց կոչումն էր նորից աչքէ անցնել

ընկերներին որ, արդարև, «ազնիւ խօսքի» տէր Փուլչատեանը խաբել է իրան անարգաբար։ Ուստի չգտնելով այլ ևս եղածն ուղղելու մի միջոց, պատուիրեց իսկոյն լծել իւր համար փոստային սայլակ, թէ կուզ դրանով նա վնասէր իւր առողջութեան։ Կայարանի վերակացուն յայտնեց որ սայլակը չի կարող նշանակած ժամին տեղ հասցնել իրան, որովհետև մեծ երթևեկութեան պատճառով ամեն կայարանում սպասեցնում են ճանապարհորդներին։ Բայց փաստաբանը լսել անգամ չէր կամենում. նա պիտի հասնէր Վլադիկաւկազ նշանակած ժամին. հակառակ դէպքում դատը կըկորցնէր և դրա հետ միասին էլ այրիի փողերը։

«Երբ սայլակը բերին, նա շտապ շտապ թռաւ նրա վրայ և «рубль тебѣ на чаекъ» գոչելով՝ հրամայեց կառապանին թռչել քամու պէս։

«Մեր ընթերցողները արդէն գուշակում են որ պ. Մարուքեանը հասաւ Վլադիկաւկազ Մայիս 20-ին, երեկոյեան 4 ժամից 30 րոպէ անց. այսինքն, այնպիսի մի ժամանակ, երբ հաշտարար դատաւորը իւր գործը վերջացրած՝ հանգիստ ճաշում էր իւր տանը։ Պարզ է որ նա դատարանում չտեսնելով բողոքարկուին, մերժել էր նրա խնդիրը և գործը դադարեցրել։

«Մարուքեանը սրտի նեղութիւնից ուզում էր տրաքուել. և եթէ այդ րոպէին նրա ձեռքը տային Փուլչատեանին, նա կըպատառոտէր նրան։

«Թէպէտ հետևեալ օրը նա դիմեց պ. դատաւորին և իւր հետ պատահած ձախորդութիւնը պատմելով՝ աշխատեց համոզել նրան մի կերպ ուղղել գործը. սակայն դատաւորը ոչ միայն մերժեց նրա խնդիրը այլ և ծիծաղեց փաստաբանի վրայ՝ նկատելով՝ որ նա ինքը լինելով օրէնսգէտ՝ այդպիսի անհեթեթ բան էր առաջարկում իրան։ Մարուքեանը, ի հարկէ, գիտէր իւր առաջարկութեան ապօրինի լինելը. բայց «խեղդուողը ձեռքը պարզում է ցօղունին»։

«Ինչ և է, Վլադիկաւկազում մնալու էլ գործ չէր մնում։ Պ. փաստաբանը վերադարձաւ Թիֆլիզ որ, գոնէ, Մարիա Իւանովնայի սիրահամբոյր ընկերակցութեան մէջ մոռանայ իւր սրտնեղութիւնը։ Բայց ո՜րքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ բնակարանի տիրուհին յայտնեց թէ՝ «տիկինը հեռացել է Թիֆլիզից մի քանի օր առաջ»։

—«Ի՞նչպէս, ո՞ւր է հեռացել, զարմացած ու շուարած հարցրեց Մարուքեանը։

—«Չգիտեմ, պարոն, մեզ չյայտնեց գնալու տեղը։ Մինչև անգամ այստեղ բերել են նրա հասցէին ուղղած մի նամակ որը ես չգիտեմ թէ ինչպէս պիտի հասցնեմ նրան, ասաց տանտիրուհին։

—«Ի՞նչ նամակ է, չէիք հաճիլ ցոյց տալ ինձ։

—«Ինչո՞ւ չէ. միայն թէ չբանաք։

Այս ասելով տան տիրուհին ներս մտաւ տուն և նամակը բերելով յանձնեց փաստաբանին։

«Վերջինս ծրարը տեսնելուն պէս մի խոր հառաչ արձակեց։ Դա իւր այն նամակն էր, որ Թիֆլիզից դուրս գալու օրը գրել էր գեղեցկուհուն, իւր սիրագեղուն զգացմունքները նրան արտայայտելու համար։

«Մարուքեանը վերադարձաւ տուն և այդ օրից սկսած գրեթէ ամբողջ ամիս տանջւող անհամբերութեամբ սպասում էր պ. Փուլչատեանին։ Նա յոյս ունէր ոչ միայն ստանալ նրանից իւր կորցրած դրամի վնասը, այլև տեղեկութիւններ առնել իւր սիրուհու մասին, որի փախուստը, ինչպէս գուշակում էր ինքը, սերտ կապ ունէր Փուլչատեանի խոստմնազանցութեան հետ։

«Եւ Փուլչատեանը եկաւ։

—«Պետր Ալէքսէիչ, այս ինչ խաղ խաղացիք ինձ հետ, ներս ընկնելով բացականչեց պ. Մարուքեանը, երբ ընդունարանի դուռը բացուեցաւ նրա առաջ։

«Փուլչատեանը սկսաւ ծիծաղել և ծիծաղում էր երկար, խառնելքական ծիծաղով։

—«Ես ձեզանից բացատրութիւն ու բաւարարութիւն եմ պահանջում, գոչեց փաստաբանը։

—«Նստիր, բարեկամ, նստիր, բարկութիւնը վնաս է մարդու առողջութեան, խօսեց Պետր Ալէքսէիչը եզակի և շարունակ ծիծաղելով.—աշխարհում ամեն ինչ պատահում է. չպէտք է զարմանալ։

—«Բայց այս պատահար չէ, սա չարագործութիւն է. դուք մի խեղճ այրիի վերջին յոյսը կործանեցիք...

—«Կամաց, սիրելիս, կամաց. ընտանիքս տանն է. զգոյշ պէտք է լինել մի փոքր։

—«Բայց ախար. . .

—«Ահա քեզ քո վնասը. այդտեղ ուղիղ 1500 ռուբլ է։

Այս ասելով պ. Փուլչատեանը դրաւ փաստաբանի առաջ մի կապ ծիածանագոյն թղթադրամ։

—«Այս ինչ է. աչքերը մեծ բանալով հարցրեց Մարուքեանը։

—«Դա՛. ոչինչ։ Ես քեզ ճանապարհից զրկեցի և ահա՛ քաւում եմ իմ մեղքը։

«Փաստաբանի զայրոյթն իջաւ. ծիածանագոյն հարիւրանոցները հանգստացնող ներգործութիւն ունեցան, յուզուած հոգին խաղաղեց։ Նա մինչև անգամ ժպտաց։

—«Այո՛, ես յանցանք գործեցի. խոստովանում եմ, կրկնեց Փուլչատեանը։

—«Բայց ինչպէս պատահեց այդ. ո՞վ տեղից ձեզ զրկել ձեր խոստման, հարցրեց պ. փաստաբանը, բայց այս անգամ աւելի մեղմ ձայնով։

—«Մի հրաշալի գեղեցկուհի։

—«Ի՞նչպէս...

—«Եթէ յիշում էք, ես ձեզ խոստացայ ժամը 2 ին գնալ կայարան և պատուիրել որ ձիաները պահեն մեզ համար։

—«Յիշում եմ։

—«Արդ. ճիշտ ժ. 2-ին ես այնտեղ էի։ Ինչ պատուէր հարկաւոր էր տուի։ Հէնց այն է ուզում էի վերադառնալ, տեսնեմ կայարանի բակը մտաւ մի գեղանի օրիորդ, սիրուն հագնուած և ձեռքը փոքրիկ ճամբրուկ։

—«Բարձրահասակ էր նա. ընդհատեց յանկարծ փաստաբանը։

—«Թոյլ տուր որ շարունակեմ։

—«Գոնէ ասացէք, կանդրահե՞ր էր, թէ ոչ։

—«Դու ինձ խանգարում ես։

—«Եւ ոչ էլ ուրեմն խաժակն։

—«Ես կըլռեմ, եթէ կամենում ես։

—«Լաւ, լաւ, շարունակեցէք. էլ չեմ ընդհատում։

—«Հա. ներս մտաւ այդ գեղանի օրիորդը, կամ տիկինը, չգիտեմ, և իւր հրաշալի աչքերը այս ու այն կողմը յածելով, վերջապէս մօտեցաւ ինձ։

—«Թոյլ տուէք, պարոն, հարցնել ձեզ, արդեօք Վլադիկաւկազ գնացող ուղևկցի տեղ չգիտէ՞ք, հարցրեց նա խիստ ընքշաբար։

—«Դուք միայնա՞կ էք, հարցրի ես։

—«Այո՛, բոլորովին միայնակ, պատասխանեց նա և սկսաւ նայել վրաս այնպիսի սիրուն աչքերով, այնպիսի գգուելի ժպիտով որ սիրտս սկսաւ հալուել... ինչ մեղքս թաքցնեմ, այդ րոպէին, ասես թէ աշխարհը շուռ եկաւ ինձ համար... մոռացայ և քեզ և քո դատն ու դատաստանը և տուած խօսքս։ Դու հօ չե՞ս մեղադրում ինձ այսպէս անկեղծօրէն խօսելուս համար...

—«Ո՛չ, ո՛չ, շարունակեցէք։

—«Ես ինքս ուղևոր եմ, ասացի, առանձին կառք ունիմ և կարող եմ ձեզ վերցնել ինձ հետ։

—«Ա՜հ, ինչքան բարի էք, պարոն, բացականչեց գեղեցկուհին և փափուկ, սպիտակ ձեռքը, որ, չգիտեմ ինչու, ազատ էր ձեռնոցից, պարզեց ինձ շնորհակալ լինելու համար։ Ես սեղմեցի այդ հրաշալի ձեռքը և, ասես թէ, Մահմեդի դրախտը մտայ։

—«Յետո՞յ, յետո՞յ, անհանգստութեամբ հարցրեց փաստաբանը։

—«Յետոյ նա հարցրեց ինձ թէ՝ արդեօք չե՞մ կարող իսկոյն և եթ ճանապարհուել, որովհետև ինքը, իբր թէ, շտապում էր։—Ինչո՞ւ չէ, թէ կուզ այս րոպէին, պատասխանեցի ես, և հրամայեցի կառքը լծել։ Մի քառորդ ժամից մենք արդէն սլանում էինք Վերայի կամուրջով։

—«Բայց ո՞վ էր այդ գեղեցկուհին, ասացէք վերջապէս.

—«Այդ գեղեցկուհի՞ն։

—«Այո՛։

—«Ես խօսք եմ տուել չարտասանել նրա անունը ոչ մի մարդու առաջ։ Այսքանը միայն կասեմ որ նա նշանաւոր ընտանիքից է եւ եկած է եղել Կովկաս ճանապարհորդելու համար։

—«Ա՜. դուք իմ խօսքերն էք կրկնում. ուրեմն ձեզ ուղեկցել է Մարիա Իւանովնան։

—«Որ չէր կամենում Թիֆլիզի ժողովարանում ծանօթանալ ոչ ոքի հետ։

—«Ձեր ծաղրը թունաւոր է, Պետր Ալէքսէիչ։

—«Եւ խնդրում էր որ դուք չընդունէք ոչ ոքից ծանօթացնելու առաջարկութիւն։

—«Բաւական է, խնդրում եմ։

—«Ես վերջացրի։

«Փաստաբանը մնաց լուռ։ Երբ շուարման վայրկեաններն անցան, հարցրեց.

—«Այդ բանն, ուրեմն, դուք սարքել էիք ինձ վրէժխնդիր լինելու համար։

—«Ոչ։ Երդւում եմ իմ գլխով։ Ես այդ կնոջ մասին չեմ մտածել երբէք։ Ընդհակառակը դուք ինքներդ էք պատճառ դարձել այդ կոմեդիային։

—«Ի՞նչպէս։

—«Այնպէս։ Գնալով նրա մօտ դուք մանրամասն պատմել էք մեր ժամադրութեան պայմանները, այսինքն թէ՝ ժ. 2 ին ես պիտի լինեմ կայարանում, թէ 5-ին անշուշտ պիտի ճանապարհուենք. թէ ես ցանկացել եմ ծանօթանալ նրա հետ, իսկ դու արդէք ես եղել նայլն նայլն։ Եւ ահա քո գեղեցկուհին, իբրև փորձառու կին՝ օգտուել է քո խոստովանութիւնից, և որպէս՝ վրէժխնդիր լինել քեզ և անձամբ ծանօթանալ ինձ հետ։ Եւ արդարև, մի ամիս շարունակ նա երանական հաճոյք պատճառեց ինձ թէ ճանապարհորդութեանս միջոցին և թէ Մոսկուայում։ Իսկ երբ բաժանվում էինք, նա յանձնարարեց ինձ ասել ձեզ՝ Rira bien, qui rira le dernier *)։

«Փաստաբանը մի քանի վայրկեան մնաց լուռ, և ապա ձեռքը ճակատին զարկելով՝ շշնջաց.

—Յիմա՛ր. յիմա՛ր...»։

Երբ պ. խմբագիրը զրոյցի ընթերցումն աւարտելով թերթերը ծալեց և ծոցը դրաւ, Միսակեանը հարցրեց իւր հիւրընկալին։

—Հա, ինչ կարծիք ունիք այժմ Փուլչատեանի մասին. կինը կարո՞ղ է խելքից հանել նրան, թէ ոչ։

—Եթէ ճիշտ է այն բոլորը, ինչ որ կարդաց պ. խմբագիրը, ապա ուրեմն կանայք կախարդներ են. պատասխանեց Մատթէոսեանը յաղթուած ձայնով։

—Կանա՛յք, ուրեմն ես էլ նրանց հետ, ճչաց տանտիկինը և՛ յուզուելով և՛ ժպտալով։

—Չէ, սիրելիս, դու գեղեցիկ չես, պատասխանեց ամուսինը հանգստութեամբ։

Տիկինը թէպէտ մի փոքր շառագունեց, բայց դրանով հիւրերի ուրախ տրամադրութիւնը չխանգարուեցաւ։

ՄՈՒՐԱՑԱՆ։

*) Կուշտ կըծիծաղէ նա, ով վերջը կըծիծաղէ։

հին պայմանը, ինչ-ինչ փոփոխութիւններ մտցնել նրա մէջ և, եթէ հնարաւոր կլինի—նոր միութեան հիմքը գնել։ Անուրանալի է, աշխատութիւնները շատ գործադրուեցան, ամիսներ շարունակ ժողովներ ժողովների հետևից տեղի ունեցան թէ մասնաւոր շրջաններում, և թէ նոյն իսկ այսպէս ասած՝ արտօնեալ միութեան ընդարձակ գրասենեակում—սակայն ոչինչ հետևանք չունեցան. ոչ մի համաձայնութիւն տեղի չունեցաւ նոր միութեան վերաբերմամբ, և ընդհակառակը—վճռուեց գոյութիւն ունեցող միութեան ևս վերջ տալ. ինչպէս այդ տեղի ունեցաւ ամսոյս 13-ին կայացած արտակարգ ընդհանուր ժողովում։ Մեր ձեռքի տակին է այդ ժողովի համառօտ արձանագրութիւնը. երկար վիճաբանութիւններից և մտքերի փոխանակութիւնից յետոյ վճռւում է. ա) յանձնել միութեան կարգադրիչ կոմիտէին այնպէս տանել գործը, որ մինչև հոկտեմբերի մէկը ներկայ թուականի արտահանուի Բաթումից միմիայն այնքան ապրանք, որքան կարող կլինին վճառուել և արտահանուել Բաթումից մինչև հոկտեմբերի 1-ը, աշխատելով հնարաւորին չափ պակասեցնել Բաթումի պահեստներում ունեցած ապրանքի քանակութիւնը, առ 1-ն հոկտեմբերի. բ) յանձնել նոյն կարգադրիչ կոմիտէին հոկտեմբերի 1-ից յետոյ վաճառել Բաթումում մնացած ապրանքի մնացորդները, վերջացնել ներկայումս գոյութիւն ունեցող «Միութեան» բոլոր գործերը. և գ) յանձնել կարգադրիչ կոմիտէին այս բոլոր գործողութիւնները կատարել ոչ ուշ քան դեկտեմբերի 25-ը սոյն թուականի։ Բացի այս երեք կէտերից, աւելացրած է արձանագրութեան մէջ—յանձնել կարգադրիչ կոմիտէին հսկել նոյնպէս, որ Բաթումում Միութեան իրաւասութեան տակ գտնուած պահեստների մէջ չընդունուեն ոչ որից «ոչ միութեան» ապրանք մինչև հոկտ 1-ը, ինչպէս այդ նախատեսնուած է Միութեան պայմանի հինգերորդ կէտում։ Այսպէս ուրեմն այլ ևս «Միութիւն» չկայ գործարանատէրերի մէջ, այլ կայ և կլինի այսուհետև միայն և միայն առևտրական՝ այսպէս ասած, մրցառան—որի հետ, սակայն, գործարանատէրերը շատ լաւ ծանօթ են.. Բայց թէ նրանք տանել կկարողանա՞ն ներկայ ծանրութիւնը, դա ցոյց կտայ մօտիկ ապագան։ Սաստիկ շոգ է, և անտանելի, հեղձուցիչ օդ. ես խօսք չեմ գտնում նկարագրելու և ես չեմ չափազանցում. այստեղ մթնոլորտը մի փակուած թոնիր է ուղղակի, որի մէջ կամաց կամաց խաշւում չորանում ենք. օդ չկայ ծծելու, օդ, օդ... գուցէ ներկայ ճգնաժամի գլխաւոր պատճառը հէնց այս է, ով գիտէ....

Օրշարունի։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՄԱՌՆԱՑԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ Ս. Ջահազիզեանի, Մոսկուա, 1897 թ., գինն է 1 ռ. 50 կ.։

Կենտրոնական կեանքից կղզիացած պ. Ջահազիզեանը ժամանակ առ ժամանակ իր մասին յիշեցնել է տալիս, թէ օտար չէ նրան այդ կեանքը։ Ինչպէս միշտ, այժմ ևս նա հրատարակում է մի շքեղ գիրք, որ արդէն արտաքին ձևով գրաւում է ընթերցողի ուշադրութիւնը։ Վերնագրից կարելի է գուշակել բովանդակութիւնը. *Նամակներով*, այն ևս *ամառնային նամակներով* հանգստեան ժամերին թղթի են յանձնուել գիւղական մառուցած զանազան նիւթերի մասին խորհրդածութիւններ, հայեացքներ, կարծիքներ, սրտի և զգացման զեղումներ։ Նրանք, որպէս պատասխանի ակնկալու, վերջնական վճիռներ յայտնում չեն, հարևանցի ակնարկներ են ձգում, փոխադարձ մտածութիւնների են հրաւիրում և առհասարակ գրուած են հազար ու մէկ խնդիրների մասին ընթերցողի ուղեղը շարժելու համար։ Հեղինակը փոյթ չունի, թէ արդեօք իր ասածով գոհացնում է ընթերցողին, թէ չէ։

Իր արտաքին շքեղութեամբ և այսպիսիներին բովանդակութեամբ՝ գիրքը մի լաւ ընծայ է հանդիսանում մեր ինքնուրոյն գրականութեան ամլութեան ժամանակ, որ մեծ զուարճութիւն պիտի պատճառէ այնպիսիներին, որոնք որ օրական հոգսերից յետոյ՝ ցանկութիւն կ'ունենան փոքր ինչ անձնատուր լինել նաև մտաւոր փոխանակութեան։ Այդ տեղ ձեզ հետ զրուցում է մի լուրջ հրապարակախօս, որ աւելի գաղտնիք բանաստեղծ է հանդիսանում նոյն իսկ իր լուրջ խօսակցութիւններում, թերևս հակառակ իր կամաց կամ իր ակնկալութեան։

Այս գրքից պարզ երևում է, որ պ. Ջահազիզեանը իր տաղանդի գեղեցկագոյն մասը մինչև այսօր թագցրել է, ուստի և իրաւամբ արժանանում է հրապարակական բողոքի։ Նա մի կոկիկ աշխուժարան-երգիծաբան է եղել, որ բայց և այնպէս իր ալքերում ոչ այնքան թունաւոր վէրքեր է հասուցանում, որքան սթափեցնում և ուշքի է բերում։ Այս բաները նա բոլէական տպաւորութեան ներքոյ է գրել, բայց աննշան համարելով, մի գուցէ թէ դամբարանի մէջ է շպրտել։ Ցանկալի է որ նա դամբարանից հանէ մէջը գրուած այդպիսի թղթի կտորտանքը, հաւաքէ ու տպագրութեան յանձնէ. նրանք մեր գրականութեան պէտք կու գան։ Ահա մի քանի օրինակներ.

(Բժշկին)

Ո՛չ ինձ, ո՛չ ինձ, այլ քեզ, պարոն,
Պէտք է պօյէտ անուանել.
Արդէն օծեց քեզ Ապոլոն,
Ինձ մնում է հնազանդել։

Թէև երկու նամակ ստացայ,
Ձեր շնորհով զարդարած.
Բայց մազի չափ բան չհասկացայ,
Ես մնացի արմացած։

Հիւանդ մարդուս ինչ քո ճառեր։
Ցաւս կարիր, բեր մկրատ՝
Քո գեղատան ազգու ճարեր,
Իմ հրաշագործ Հիպոկրատ։

—

(Ձեռ ծեւացող կրիտիկոսին)

Բայց Ձեզի ուղարկածը
Այժմ, կարծեմ, գիտէք դուք,
Ոչ կայծակ է, ոչ կարկուտ,
Այլ միայն բանջարափատուկ։

—

(Մի ատախօս վերակացուին, որ աշակերտների առաջ այսպէս է պարծեցել. „Мы и кометамъ, и планетамъ напишемъ инструкцію").

Ասում են որ կոմետներ
Ճանապարհից են ծռել.
Արէգը ու Իւպիտեր
Պատերազմ են բաց արել։

Այսպէս երկայթի հետ,
Կարծեմ, որ քաջ ծանօթ ես.
Չի կարելի, ատաղձէտ,
Նրանց մի նոր կարգ գրես։

Փիլիսոփայ, իմաստուն,
Պոչով աստղերի մեկնիչ.
Սրանք են քո մականուն,
Bravo, Զախար Իւայիչ։

—

(Հիւսէին կլէկչիի երգը)

Այս աշխարհում ամեն բան
Իր կարգովը գնում է.
Ողորմելի է մարդն այն,
Որ իր կեանքից գոհ չէ.

Մինը հարուստ, միւսն իշխան,
Երրորդը փինաչի.
Մինը զալլաք, միւսն չօբան,
Էհ, ես էլ կլէկչի։

Հարբաշեցի պարկերը,
Դիտեմ, ոսկով լի են,
Բայց իմ քոնձօտ փուրսերը
Նրանցից պակաս չեն։

Այժմ շատալի, երջանիկ,
Դու, Հիւսէին կլէկչի.
Մնաք բարով, պատուելիք,
Փլաւս կըսառչի։

Վերջին հատուածի առթիւ, պ. Ջահազիզեանը մեզ յիշեցնում է, թէ վաթսնական թուականներում տաղերիս գրողը այդ երգը երգել է բեմի վրայ, և այժմ նրան հրաւիրում է, որ նորից երգէ, եթէ հայ մարդուն վայել է այժմ երգել, որովհետև մեր կեանքից գոհ չենք։ Համակրութեամբ ընդունելով այդ հրաւէրը, որպէս ուսանողական ժամանակի prosit, պատասխանում ենք իրան, ich komme nach!—որովհետև կեանքից գոհ չլինելու ցաւից՝ աւելի մեծ պատուհաս է ծայրագոյն յուսահատութիւնը, որ իսկ և իսկ դէպի կործան է տանում կամ, կլէկչիի ասութեան ձևով,... խաշառ սառչում է փլաւը։

Amicus Plato... պ. Ջահազիզեանի յարուցած խնդիրներից մէկը չենք ուզում անյիշատակ թողնել։ Դժուարանում ենք հասկանալ, թէ ո՞ր կարելի է սփոփել բանաստեղծին հրապարակ հանել հին և մաշուած ձևով կուսակցութեան խնդիրը։—Քաղաքական կեանք վարող ազգերի մէջ կազմւում են պատմական և պահպանողական կուսակցութիւններ. հպատակ ազգերի մէջ այդպիսի կուսակցութիւններ փնտռելը՝ նշանակում է սառոյցի մէջ՝ տաքութիւն, ջրի մէջ ցամաքութիւն երևակայել։ Բայց այդ *զառանցական* բառերը, ինչպէս որ ինքը բանաստեղծը հաբեանցի կոչում է, ահաւասիկ արդէն հասուցին մեզ. մենք իրօք պառակտուեցանք և սկսեցինք իրար միտն ուտել, երբ որ գէթ չնչին չափ համերաշխութիւն պէտք է ունենայինք՝ ընդհանուր աղէտի դէմ թումբ կանգնեցնելու համար։ Մի ինչ որ թիւրիմացութեամբ և մտքի խաւարմամբ, այլ և նախանձով, մեր լաւագոյն ոյժերը այնպիսի դրօշակներ բարձրացուցին, որ ծիծաղ կարող էր զարթեցնել, եթէ հետևանքները այդքան աղէտալի չլինէին։ Մինչև վերջ ի վերջոյ ինչ վաստակեցինք. այո, կուսակցութիւններ ունէինք, բայց այդ կուսակցութիւնները ոչ թէ սկզբունքի, գաղափարի, քաղաքական անձանց կուսակցութիւններ էին, այլ անձնական լուացքի չափահասութիւններ, քմահաճոյ խիզախութեամբ մի և նոյն ապրանքը փայլեցնելու կամ ցեխոտելու համար։ Ո՞վ օգտուեց այսպիսի իրարանցումից, որի՞ սրտին եղ քսուեցաւ. . . միթէ ժամանակ չէ, որ փոքր ինչ հաշիւ տանք մեզ—մեր ինքնակործան արարմունքների մասին։ Դարձեալ կրկնում ենք, մեր լաւագոյն ոյժերը յանցաւոր են, որ ժողովրդին առաջնորդ հանդիսացան այնպիսի թունաւոր *բառերով*, որով թէ իրանք խաբուեցան, և թէ շատերին մոլորեցրին։ Զօր օր. պ. Ջահազիզեանը շատ գովեստով է խօսում բանաստեղծ Պատկանեանի մասին, որ այդ գործին է ծառայել։ Բայց մոռանում է, որ Պատկանեանը, որպէս խելական առաջնորդ, շուտ հասկացաւ իր օժանդակութիւնը այդ տալի գործին, հրաժարուեց իր նախկին նագանքներից և բաւեց իր մեղքը. գրելով մի *ինքնախոստովանութիւն* դառնաշունչ ձևով։ Պէտք է ափսոսալ միայն, որ նա շատ կոպիտ կերպով արտայայտեց իր ինքնախոստովանութիւնը և, փոխանակ մի գեղարուեստական արձան թողնելու, որպէս զի մեր բարոյական թմրութիւնը սթափեցնէր, բաւականացաւ վաղանցուկ պամփլէտով։ Սակայն իրողութիւնը մնում է իրողութիւն։ Պատկանեանը իր սուր աչքով չըխաբուեցաւ փայլից և նկատեց մաշուած ոսկու կեղծութիւնը։—Բայց միթէ ինքը պ. Ջահազիզեանը այդ բանը չի՞ նկատում։ Ի՞նչպէս չէ. նա նկարագրում է մի տիպ Ուզուն-Ախմախ ոչ-փափուկ յորջորջմամբ, որ և մեր յիշատակած ծառի հարազատ պտուղն է։ Այս էլ մի տեսակ ինքնախոստովանութիւն է։

Ժամանակ է, որ յառաջադիմութեան պատնէշը վեր ցցուած փայլաքի կտորին չտրուի։

Ս. Մանդինեան

Ժամանակաւոր խմբագիր՝ Ե. ԽԱՉԱՏՐԵԱՆ

Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիսի) և ներքին հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9-10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ.—12½—1½ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն.

Վճար 50 կ. Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Ի տեղի հիւանդանոցի վերատեսչի՝ Բժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՕ.

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշակական մահճակալների բաժնով

ԴՈՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ

(ՆԱԽԿԻՆ ԴՈՔՏՈՐ ԿԱՐԳԱԶՆԿՈՒԹԻ)

Սօլոլակ, Գանովսկայա փողոց № 3,

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ԶՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը 12½—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը)։

Ե. Գ. ԴԵԼՈՎ. ժամը 12½—1½. ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին-բժիշկ ԵԱ. Կ. ԿԱՐԳՈՎԻՉ, ժամը 10—11, մանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱԻՆՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԷՆՑ, գեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, էլեկտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

(Թիֆլիզում) պատիւ ունի յայտարարել ի գիտութիւն հայ հասարակութեան, որ պ. Նիկողայոս Տէր-Ղեւոնդեանի հրատարակութեանց ամբողջ պահեստը յանձնուած է գրատանը, ուստի ցանկացողները այսուհետև բացառապէս պէտք է դիմեն վերոյիշեալ գրատունը։

Գաւառից գնողները սովորական զիջումն են ստանում։ (30-3)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է, որ իր գրասենում, առաւօտեան ժամը 12-ին, յուլիսի 29-ին նշանակուած է աճուրդ կապալով տալու Նախկին Ճիօէլի բարվանսարայի շինութիւնների քանդելը և առաջնի ու թափթփուկի դուրս տանելը։ Կապալը վերցնել ցանկացողները կարող են տեսնել պայմանները վարչութեան շինութեանց մասում ամեն լի օր առաւօտեան ժամը 9-ից մինչև 1-ը։ (3—2)



Bateaux a vapeur Français „N. PAQUET ET CIE“

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ եւ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կլինի ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷՅԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 23 յուլ. 4 օգ. ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետն է ԲԻԱՆԿԻ,

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին որ եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաւահանգիստ։

Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բարսեղեանդանեանին, Սիօնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։

Բագւում.—Պ. Ս. Դիլդարեանին, Կոլիւբակինի հրապարակ։

Նովորոսիյսկում.—պ. Մելխիօր Հերշենրօդերին։ (20—6)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առևտրական և գործարն. հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում, հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՈՒՍԱՐԿԱՆՆԵՐՆ ԵՆ

ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերպասների գործարանական հաշուապահութեան։

բ) Առևտրական թուաբանութիւն։

գ) Առևտրական նամակագրութիւն։

դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքներն սկսուելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սադովայա փողոց, տուն Մարգարովի, № 27։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախւում է Թիֆլիզի և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ռուբլի 50 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։ (15—8)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՕՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ՌՈՒԲԼԻ ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծովային, գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի գլուխ աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. դրամագլխի, որ պիտի տա տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւնները ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում որոշ դրամագլուխն ապրուստի միջոցների համար նիւցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունւում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկվայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ Թիֆլիզում (Վելյամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ Կայսրութեան բոլոր քաղաքներում։ (100—28)

ԵԼԻԶԱՒԵԹՊՕԼԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՑՈՒԱԾ ԵՆ

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ծրագիր. 1) Առևտրական թուաբանութիւն, 2) Կրկնակի հաշուապահութիւն—նաւթային արդիւնաբերական գործարանային, առևտրական բանկային և այլն, 3) Առևտրական թղթակցութիւն, 4) Գեղագրութիւն։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ԻՍԿ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲ. 20-ԻՑ

Դասընթացների հիմնադիր Ա. ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆ։

Վաճառւում է դասընթացների հիմնադրի նոր գիրքը.

«Նաւթային արդիւնաբ. գործարանային համառօտ հաշուապահութիւն»

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ (20—5)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ինձ մօտ ատլասի կամ մետաքսէ կտորի վրայ նկարած հայ յայտնի գործիչների պատկերները՝ բազմոցի բարձի երես, պատուհանի շիրմա, մետաքսեայ թաշկինակներ, ժապաւէններով (գրքանշան), լուսանկարի 6 կամ 4 պատկերով, յաղճապակեայ ամաններ։ Ցանկացողները կարող են ունենալ իրանց պատկերը այդ առարկաների վրայ և կարող եմ ուղարկել ամեն քաղաք մատչելի գնով։ Ընդունում եմ աշակերտներ և աշակերտուհիք մատչելի գնով լուսանկարչութիւն սովորեցնելու։

Հասցէն՝ Тифлисъ, Малая Ванкская ул., д. № 5 А. Родіоновой. (6—5)